



187. ԹԱԳԱՎՈՐԸ, ԱՅԳԵՊԱՆՆ ՈՒ ՕԶԸ

Մի թագավոր ունենում է մի մինումար տղաւ Այս թագավորի պալատի մոտ կար մի սիրում այգի, որն ուներ մի շատ փորձված, աշխարհ տեսած այգեպան։

Այգու մեջ կար մի կաշկառ, որի մեջ վիստում էին զանազան տեսակի թունավոր օձեր, կարիճներ և ալլն։

Մի օր այգեպանը տեսնում է, որ թագավորի տղան եկել է այգին։ Նա երեխայի ձեռքից բռնում է ու տանում թագավորի մոտ, ասելով。—Ռվ թագավոր, մեր այգու մեջ կան շատ թունավոր օձեր, իսկ քո տղան անվախ ներս է մտնում ու ման գալիս, կարող է օձերը նրան թունավորեն, խնդրում եմ այսուհետև թույլ շտառ նրան այգի գալու։

—Լա՛վ, —ասում է թագավորը, —այսուհետև թույլ չեմ տա։

Մի քանի օր հետո թագավորի տղան գալիս է ծածուկ մտնում այգին և իր համար սկսում զրունելի Հոգնելուց հետո պառկում է մի ծիրանի ծառի տակ և քնում։ Կաշկառից մի թունավոր օձ է դուրս գալիս և կծում ու թունավորում տղային։ Տղան մեռնում է։ Այգեպանը միամիտ ման գալիս տեսնում է թագավորի տղան թունավորված, մեռած։ Վերցնում է տանում թագավորի մոտ ու ասում։ —Ով մեծ թագավոր, ես ասացի, որ տղայիդ մի թողնիր այգին մտնի, հիմա թունամահ է եղել, ո՞վ է պատասխանատու, նա արդեն մեռել է։

— Վեսա շունի, — ասում է թագավորը, — աշխարհն իմ տղային շմնաց, օձին էլ չի մնա: Աւ հրամայում է տանեն տղին թաղելու

Մի երկու օր հետո այգեպանն այն ծիրանի ծառի տակ, որտեղ թունավորվել էր թագավորի տղան, մի սկզբ է տեսնում և իսկույն իմանում է, որ նա է թագավորի տղին թունավորել, մանավանդ, երբ տեսնում է օձի աշքերն արնակալած ու կատաղի: Բահը վեր է քաշում և օձին սպանում: Սպանած օձը տանում է թագավորի մոտ, ասելով: — Տեր թագավոր, ահա քո թշնամին, ես քու որդու վրեժն առա:

— Լա՛վ, — ասում է թագավորը, — աշխարհը որդու շմնաց, օձին շմնաց, քեզ էլ չի մնա:

Մի երկու օր հետո թագավորը մի հաղվագյուտ ծառ է տընկել տալիս իր այգում, որի նմանը չկար և այգեպանին պատվիրում է, որ ծառը բռլորովին չըրի:

Սառը մեկ-երկու օրից հետո թառամել է սկսում:

— Ի՞նչ է հասկանում թագավորը, այս ծառը շատ ընտիրն է, ափսոս է, կըրանա, թող ջրեմ, — մտածում է այգեպանը և ծառին ափսոսալով ջուր է կապում տակը: Ջուրը դեռ տեղ չհասած, թագավորը բռնում է այգեպանի օձիքից և ասում.

— Ես շասի՝ քեզ, որ չըրեն ծառը:

— Ասիր, — վախեցած պատասխանում է այգեպանը:

— Ուրեմն ինչո՞ւ ես շրում:

— Թագավոր, ծառը թանկագին է, ես վախեցա, որ շորանա, — կրկին վախեցած պատասխանում է այգեպանը:

— Իմ խոսքն էր թա՞նկ, թե ծառը, — մռնչում է արքան:

— Քո խոսքը, — վճռաբար ասում է այգեպանը:

Ուրեմն որ դու չես կատարել իմ խոսքը, ես դրա համար քեզ կախել կտամ, — ասում է արքան և ծառաներին հրամայում կախել անհնագանդ այգեպանին: Երբ կախաղանի թոկը հազնում էին այգեպանի վիզը, նա ճշաց.

— Ա՛րքա, աշխարհը տղիտ շմնաց, օձին շմնաց, ինձ էլ շմբնաց, լավ իմացիր, քեզ էլ չի մնա:

